# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 30-ի N 1292-Լ որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

-----   ------------- 2019 թվականի N ----------- Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1292-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 30-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1292-Լ որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Որոշման N 2 հավելվածի 1.4-րդ կետի «Միջոցառման անվանումը» սյունակում «ռազմավարության» բառը փոխարինել «2020-2024 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման» բառերով:
- Որոշման N 2 հավելվածի 1.4-րդ կետի «Ակնկալվող արդյունքը» սյունակում «Ցերեկային այլընտրանքային ծառայությունների ընդլայնում» բառերը փոխարինել «Այլընտրանքային ծառայությունների ընդլայնում» բառերով:
- Որոշման N 2 հավելվածի 2.3-րդ կետի «Ակնկալվող արդյունքը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ուղևորափոխադրումներ կազմակերպելու մրցույթներում տրանսպորտային միջոցի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պայմանի ամրագրում, վարորդների շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին իրազեկման աշխատանքների իրականացում, հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտից օգտվելու իրավունքի ապահովում»:
- Որոշման N 2 հավելվածի 2.4-րդ կետի «Միջոցառման անվանումը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ծառայություն մատուցող մարմիններում տեսահաղորդակցման համակարգի

ներդրմանն ուղղված ծրագրի մշակում, պիլոտ ծրագրի իրականացում»:

- Որոշման N 2 հավելվածի 2.4-րդ կետի «Ակնկալվող արդյունքը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ ստանալու նպատակով հաղորդակցման իրավունքի ապահովում»:
- Որոշման N 2 հավելվածի 1-րդ կետի «Պատասխանատու կատարող» սյունակում և 3-12-րդ կետի «Պատասխանատու կատարող» սյունակում «ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «Մարզպետարաններ Համայնքապետարաններ» բառերով:
- Որոշման N 2 հավելվածի3-րդ, 3.4-րդ, 3.5-րդ, 3.7-րդ, 3.11-րդ, 5.13-րդ, 8.7-րդ, 10.1-րդ կետերի «Պատասխանատու կատարող» սյունակում «Մարզպետարաններ» բառից հետո նշված «(համաձայնությամբ)» բառը հանել:
- Որոշման N 2 հավելվածի9-րդ կետի «Պատասխանատու կատարող» սյունակում «Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ» և 3-12-րդ կետի «Պատասխանատու կատարող» սյունակում «Երևանի քաղաքապետարան» բառերից հետո լրացնել «(համաձայնությամբ)» բառը:
- Որոշման N 2 հավելվածի 3.4-րդ կետի «Ակնկալվող արդյունքը» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Դպրոցներում մատչելի միջավայրի ստեղծում և ըստ գնահատված կարիքի անհրաժեշտ գույքով ապահովում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: